

Անգղը շուտ զայն կքակեր, եթէ ամպերէն յանկարծ  
Զսրանար արծիւ մը՝ խը թե երը տարածած.  
Գողերուն այս բախումը յօդուտ զարձուց աղաւնին  
Թռաւ զնաց դաղբեցաւ աւերակի մը մօտին,

## Եւ կարծեց թէ, ոյլ վշտաց

**Վերջ կղնէ այս դիպուած:**

Չարաձմի մեկ տղայ (այս հասակը դութ չունի)

Զգեց յանկարծ սղարտաքարն ու մեր խեղճուկ աղաւնի

## ԱԵԼ Հարուածով կիսամահ

**ԹԵՂԱՔԱՆ ու կաղի կաղ**

## Ենիծելով հետաքրքիր իւր բնութիւն

Խաղաղ ուղղակի գարձուց նորէն դէպ ի տուն.

Հասաւ տեղը լաւ ու վատ

Ե. Տ. մեծ փորձանքէ, աղաւան:

Երդ մէկզմէկ զտած են և քեզ դատել կը պահանջ

Վանի՝ հրճուանօք ըրբին խւրեանց վշտաց հատուցում.

Եմ սիրելիք՝ բարեկամք, աշխարհ քայլութէ զանկաք,

Թառղ այն լինի ձեր երկրին կամ հայրեննեաց մերձակալուք.

Դուք իրարու նկատմամբ պէտք է լնիք անդադար

Վիշտ գեղանի, բազմազուարձ, նորապայծառ մեկ աշխարհ։

Յառակաց լա Յոնթէն Գաղղիացւոյ

Digitized by srujanika@gmail.com

ԱԶԳԱՅԻՆ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Աալկաթայէն ստացեալ զրութիւններ  
կշալորդնեն, զի ի 7—19 անցեալ Հոկ-  
տեմբեր ամսոյ՝ Գեր, Գրիգորիս Ալքե-  
պիսկոպոս Սուածնորդ Օհելլին Հայոց Առ-  
ջ.ուղայու և Հնդկաստանի և Օ. Եուի-  
րակն՝ Յարս-Ռեյ - Սբ Հայ Հոգենաւով մեկ-  
նած է Աալկաթայէն ի Ամսկափօր՝ ի Բը-

թաւիս և ի Պինանդ բնակեալ Հայկազն  
եղբարց այցելութիւն տալով՝ զնոսա մը-  
խիթարելոյն Համար :

Եթէ ծովն յաջողակ լինի և ներէ, Անդ-  
զիական կառավարութեան իշխանութեան  
տիրած Զինաստանի հօգ - Պօնկ կղղւոյն  
ևս Ատրին Գերապատութիւն պիտի  
այցելէ, ուր մի քանի հայ վաճառականիք  
կզանուին եղել :

Անհամբեր կսպասեմք կարևոր տեղեկութեանց, և երբ ստանամք՝ ուշադրութեան արժանի եղածները կհաղորդեմք Արարատայ ընթերցողաց: — Աւելի հետաքրքիր եմք այն սպատճառով, որ անցեալ ուկտեսմբեր ամսոյ վերջերում Պէնէտալյան երկրում աշխաղին փոթորիկ և թարթառ սպատահեցաւ, և բաց ի մեծ աւերմունքէ ըստ ումանց 215 հազար, և ըստ այլոց ց500000 մարդիկ զոհ եղած են: —

Դեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս յառաջակայ Յունվար ամսոյ վերջերում պիտի վերադառնայ ի Կալկաթայ:

ԴԱԼԱՑԱՆՈՒԹԻՒՆՔ.

Բաւական ժամանակէ հետէ՝ մի քանի անձինք Անպահանում եւ մի ծերունի եկեղեցական Կալկաթայում նրատած՝ գողցես ուրիշ զբաղմունք չունենալով՝ բնական սովորութիւն են ունեցել այս եւ այն Առաջնորդի՝ այս եւ այն պաշտօնակատարի դէմ դաւաճանութիւններ նիւթել, Հայութիւն, Բարենախանչ Հայ, Արքեպիսկոպութիւններով՝ եւ մերժ աստղանիշ դնելով՝ զանազան տեսակ եւ գրգռիչ հրատարակութիւններ կշռայլեն Արշալյան, Մասկս եւ այլ լրագրաց մէջ, երբեմն առանձին տետրակիներ կհրատարակեն, Հնդկաստանի եւ Պարսկաստանի՝ եւ աւելի Առաջանայ կողմանց Հայոց դրութեան վերայ տիսուր տեղեկութիւններ կտան, Առաջնորդաց՝ դպրոցաց՝ քահանայից՝ եկեղեցպահանաց՝ հոգաբարձութեանց եւ ժողովրդեան դէմ խիստ

շատ եւ չափաղանց (եթէ չասեմք ըստ մեծի մտսին անոնց լէ) գանգատներ, ողբեր, բաղմաղգի տրուունջներ, հառաջանք եւ կայեր կշեղջակուտեն, այնքան որ՝ եթէ հրատարակեան արժանի պարբերութիւնք եւ խնդիրք լինին՝ նոքա եւս ուշադրութենէ կրիպտին եւ այնուհետեւ երեւցածը միայն եւ միմիայն կէր եւ հակառակութեան կլինին: — Թէպէտ առ այժմ Առաջանի կողմը դադարած կերեւին ակնարկեաներս, սակայն Կալկաթայի ծ' ըստնին՝ չնայելով որ 3—4 Առաջնորդ՝ թեմակալայ դէմ մաքառելով՝ եւ ստահակ պարզով եւ բարքովն արժանաւոր պատիժներ կրելով՝ ցարդ ուշաբերած չէ, եւ այսօր մի ոտքը գերեզմանի վերայ դրած՝ փոխանակ ստրջելոյ եւ ապաշխարելոյ՝ լեզուաքար եւ քսուընթացիւք եւ հրատարակութեամբք կշարունակէ աջ եւ ձախ եւ անիրաւաբար յարձակուիլ, ուստի եւ ցարդ ժողովրդեան զայրոյթը եւ զզուանքը ընդ դէմ իւրշարժածէր, բայց դարձեալ զզաստանար: — Եւ որպէս զի աւելի պարզ հասկացընեմք, եւ նորա գրուածոց եւ շարժմանց առ ժողովուրդն ներգործած եւ տպաւորած ազգեցութեան վերայ մի գաղափար տամք, ահաւասիկ յանցելումն՝ ինքըն ի Կալկաթայ նստելով « Զաղացեցն » ստորագրութեամբ մի բան գրածէր, որոյ դէմ մի ողջամիտ անձէն առ բարեկամն իւր ուղեկեալ հետագայ նամակը կհրատարակեմք տռանց մանրամասներոյ այս առթիւ անցած մի քանի ուշադրութեան արժանի անցքերը,